**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս շփվում է ընթացիկ գործունեության շրջանակներում: Տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում օժանդակում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների բացահայտմանը և մասնակցում է որոշակի կազմակերպական խնդիրների լուծմանը:

**5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության ավագ սերժանտի կոչում:



Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՇԵՐԹԱՊԱՀ ՇԵՐԹԱՓՈԽԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ

#### 1. Ընդհանուր դրույթներ

##### 1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) օպերատիվ հերթապահ հերթափոխի համակարգչային օպերատոր (ծածկագիր՝ 13-1ՓԾ-26.6-Կ-11)։

##### 1.2. Ենթակա և հաշվետու է

Համակարգչային օպերատորը անմիջական ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին։

##### 1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Համակարգչային օպերատորը անմիջականորեն ենթակա ծառայողեր չունի։

##### 1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Համակարգչային օպերատորի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի մյուս համակարգչային օպերատորը։

##### 1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 3/1:

#### 2. Պաշտոնի բնութագիրը

##### 2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

##### Գործառույթները՝

1. Համակարգչային օպերատոր կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ գերազանցելու, ինչպես նաև ՃԿԿ առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար

2. Ծառայության ներսում կառուցվածքային, տարածքային և այլ ստորաբաժանումների ծառայողների հետ շփվում ու հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում։

3. ՃԿԿ պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական ու այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին

4. Բացահայտում, վերլուծում և գնահատում է ՃԿԿ և իր առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը։

##### Իրավունքները՝

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։

5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։

6. իրավական պաշտպանությունը։

7. առողջության պահպանումը։

8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը։

9. նշանակման արդյունքները բողոքարկելը։

10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը։

11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը։

##### Պարտականությունները՝

- մասնակցել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու դրանց պահանջների կատարման ուղղությամբ աշխատանքներին.

- մասնակցել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքներին.

- մասնակցել մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակմանը.

- մասնակցել ուսումնավարժությունների.

- մասնակցել փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացմանը.

- մասնակցել արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման աշխատանքներին.

- սահմանված կարգով բնակչությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

- սահմանված կարգով ձեռք բերել տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

- իր իրավասության սահմաններում պահպանել և օգտագործել ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Առնվազն միջնակարգ կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

**3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ  
Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Հաշվետվությունների մշակում
2. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

**4. Կազմակերպման շրջանակը**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում::

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս շփվում է ընթացիկ գործունեության շրջանակներում: Տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում օժանդակում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների բացահայտմանը և մասնակցում է որոշակի կազմակերպական խնդիրների լուծմանը:

**5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության ավագ սերժանտի կոչում:

Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

### **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

##### **1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.14-Ա-3)։

##### **1.2. Ենթակա և հաշվետու է**

Կենտրոնի ավագ հրահանգիչը անմիջական ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին։

##### **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները**

Կենտրոնի ավագ հրահանգիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի։

##### **1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Կենտրոնի ավագ հրահանգիչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի մյուս ավագ հրահանգիչը։

##### **1.5. Աշխատավայրը՝**

Հայաստան, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 3/1:

#### **2. Պաշտոնի բնութագիրը**

##### **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

##### **Գործառույթները՝**

1. Ավագ հրահանգիչն կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ գերազանցելու, ինչպես նաև Կենտրոնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

2. Ծառայության ներսում կառուցվածքային, տարածքային և այլ ստորաբաժանումների ծառայողների հետ շփվում ու հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում։

3. Կենտրոնի պետի հանձնարարությամբ Ծառայության ներսում և Ծառայությունից դուրս մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին)։

4. Կենտրոնի պետի հանձնարարությամբ Ծառայությունից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկույցներով, հաշվետվություններով և այլն։

5. Կենտրոնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական ու այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին։

6. բացահայտում, վերլուծում և գնահատում է Կենտրոնի և իր առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը։

##### **Իրավունքները՝**

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։

5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։

6. իրավական պաշտպանությունը։

7. առողջության պահպանումը։

8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը։

9. նշանակման արդյունքները բողոքարկելը.

10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.

11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

### **Պարտականությունները՝**

- իր իրավասության սահմաններում մասնակցել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

- իրականացնել օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը.

- իրականացնել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու դրանց պահանջների կատարման ուղղությամբ աշխատանքները.

- իրականացնել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքները.

- իրականացնել մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակումը.

- մասնակցել ուսումնավարժությունների.

- մասնակցել փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացմանը.

- իր իրավասության սահմաններում մշակել և պարբերաբար ճշգրտել մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

- իրականացնել արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և վերահսկել դրանց պարբերաբար թարմացումը.

- իրականացնել մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծության աշխատանքները և սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն.

- իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա

հակահրդեհային տեխնիկայի հաշվառման աշխատանքները ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ մասնակցել հետախուզության աշխատանքներին, ինչպես նաև ամփոփել, վերլուծել հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

- բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ մասնակցել մարզի ղեկավար կազմի ազդարարմանը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկմանը.

- սահմանված կարգով բնակչությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

- իրականացնել արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծության և վիճակագրության վարման աշխատանքները.

- իրականացնել տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծման ու դրանց արդիականացման աշխատանքները.

- սահմանված կարգով ձեռք բերել տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

- իրականացնել տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

- իրականացնել մշտադիտարկման արդյունքների մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

- իր իրավասության սահմաններում պահպանել և օգտագործել ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բխմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

#### **3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ**

##### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

##### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Փոփոխությունների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

### **4. Կազմակերպման շրջանակը**

#### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

#### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

#### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

### **5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության մայրի կոչում:

Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

### **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

##### **1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.14-Ա-4)։

##### **1.2. Ենթակա և հաշվետու է**

Կենտրոնի ավագ հրահանգիչը անմիջական ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին։

##### **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները**

Կենտրոնի ավագ հրահանգիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի։

##### **1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Կենտրոնի ավագ հրահանգիչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի մյուս ավագ հրահանգիչը։

##### **1.5. Աշխատավայրը՝**

Հայաստան, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 3/1:

#### **2. Պաշտոնի բնութագիրը**

##### **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

##### **Գործառույթները՝**

1. Ավագ հրահանգիչն կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ գերազանցելու, ինչպես նաև Կենտրոնի առջև դրված

խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

2. Ծառայության ներսում կառուցվածքային, տարածքային և այլ ստորաբաժանումների ծառայողների հետ շփվում ու հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում։

3. Կենտրոնի պետի հանձնարարությամբ Ծառայության ներսում և Ծառայությունից դուրս մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին)։

4. Կենտրոնի պետի հանձնարարությամբ Ծառայությունից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկույցներով, հաշվետվություններով և այլն։

5. Կենտրոնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական ու այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին։

6. բացահայտում, վերլուծում և գնահատում է Կենտրոնի և իր առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը։

##### **Իրավունքները՝**

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։

5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։

6. իրավական պաշտպանությունը։

7. առողջության պահպանումը։



8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

9. նշանակման արդյունքները բողոքարկելը.

10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.

11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

### **Պարտականությունները՝**

- իր իրավասության սահմաններում մասնակցել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

- իրականացնել օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը.

- իրականացնել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու դրանց պահանջների կատարման ուղղությամբ աշխատանքները.

- իրականացնել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքները.

- իրականացնել մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակումը.

- մասնակցել ուսումնավարժությունների.

- մասնակցել փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացմանը.

- իր իրավասության սահմաններում մշակել և պարբերաբար ճշգրտել մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

- իրականացնել արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և վերահսկել դրանց պարբերաբար թարմացումը.

- իրականացնել մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծության աշխատանքները և սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն.

- իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառման աշխատանքները ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ մասնակցել հետախուզության աշխատանքներին, ինչպես նաև ամփոփել, վերլուծել հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

- բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ մասնակցել մարզի ղեկավար կազմի ազդարարմանը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկմանը.

- սահմանված կարգով բնակչությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

- իրականացնել արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծության և վիճակագրության վարման աշխատանքները.

- իրականացնել տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծման ու դրանց արդիականացման աշխատանքները.

- սահմանված կարգով ձեռք բերել տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

- իրականացնել տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

- իրականացնել մշտադիտարկման արդյունքների մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

- իր իրավասության սահմաններում պահպանել և օգտագործել ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված

խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

#### **3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

##### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

##### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Փոփոխությունների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

### **4. Կազմակերպման շրջանակը**

#### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

#### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական

գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

#### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

### **5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության մայրի կոչում:

Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

### **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏ**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

##### **1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Փրկարար ծառայության (Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.14-Ա-2)։

##### **1.2. Ենթակա և հաշվետու է**

Կենտրոնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին, Վարչության պետի տեղակալին։

##### **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները**

Կենտրոնի պետին անմիջականորեն ենթակա են Կենտրոնի ծառայողները։

##### **1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Կենտրոնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի ավագ հրահանգիչներից մեկը։

##### **1.5. Աշխատավայրը՝**

Հայաստան, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 3/1:

#### **2. Պաշտոնի բնութագիրը**

##### **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

##### **Գործառույթները՝**

1. պատասխանատու է ճգնաժամային կառավարման կենտրոնի առջև դրված խնդիրների և գործառույթների կատարման համար։

2. իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում և Վարչության պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ։

3. իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում և վերահսկում է Վարչության անձնակազմի մասնագիտական պարապմունքների անցկացումը։

4. մասնակցում է աղետի գոտում փրկարարական, վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպմանը՝ ընդգրկելով անհրաժեշտ փրկարարական ուժեր և համակարգելով նրանց գործունեությունը։

5. մասնակցում է մարզում, համայնքներում, կազմակերպություններում անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստմանը և անցկացմանը։

6. կազմակերպում է արտակարգ իրավիճակներում բնակչությանը վարվելակերպի կանոնների մասին իրազեկումը։

7. իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում է մարզի, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավար կազմի և բնակչության ուսուցումն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով։

8. կազմակերպում է Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի ընթացիկ, տարեկան պլանների և կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակումը։

9. կազմակերպում է Վարչության կողմից անցկացվող ուսումնավարժությունների պլանավորող փաստաթղթերի մշակումը։

10. մեթոդական օգնություն է ցուցաբերում մարզի համայնքների և կազմակերպությունների կողմից անցկացվող ուսումնավարժությունների պլանավորող փաստաթղթերի մշակմանը։

11. կատարում է ճգնաժամային կառավարման կենտրոնի աշխատակիցների միջև պարտականությունների բաշխում և սահմանում նրանց պատասխանատվության աստիճանը, աշխատանքների կատարման ժամկետները։

12. Վարչության պետին առաջարկություններ է ներկայացնում ճգնաժամային կառավարման կենտրոնի անձնակազմի խրախուսման և կարգապահական տույժեր տալու վերաբերյալ։

13. կազմակերպում է Վարչության փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների համապատասխան փաստաթղթերի մշակումը։

14. իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խորհրդակցությունների, դասընթացների, սեմինարների, հանդես է գալիս զեկույցներով.

15. մասնակցում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներին.

16. ամիսը մեկ անգամ Վարչության պետին ներկայացնում է զեկույց՝ Վարչության պլաններով նախատեսված միջոցառումների կատարման և ծառայողական կարգապահության վիճակի վերաբերյալ.

17. ստորագրում է ճգնաժամային կառավարման կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

18. իր լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացնում ճգնաժամային կառավարման կենտրոնի անձնակազմի կարգապահության, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանման ուղղությամբ.

19. Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

### **Իրավունքները՝**

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.

5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.

6. իրավական պաշտպանությունը:

7. առողջության պահպանումը.

8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

9. նշանակման արդյունքները բողոքարկելը.

10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.

11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

### **Պարտականությունները՝**

- իր իրավասության սահմաններում կազմակերպել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող պլանների, ծրագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

- կազմակերպել օպերատիվ հարցերին վերաբերող հրամանների, կարգադրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը.

- հսկողություն սահմանել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեության ընթացիկ և տարեկան պլանավորումն ու դրանց պահանջների կատարման ուղղությամբ.

- կազմակերպել Վարչության, ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակման աշխատանքները.

- ապահովել մարզի մակարդակով անցկացվող ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակումը.

- կազմակերպել ուսումնավարժություններ՝ Վարչության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների մասնակցությամբ.

- կազմակերպել փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքների անցկացումը.

- պարբերաբար ճշգրտել մարզի ղեկավար կազմի, ինչպես նաև Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.

- մեթոդական օգնություն է ցուցաբերում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ օպերատիվ-տակտիկական պատրաստության ուղղությամբ.

- իր իրավասության սահմաններում մասնակցել բնակչության ուսուցման կազմակերպմանը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնահարցերով.

- սահմանված կարգով արձագանքել գրանցված արտակարգ իրավիճակներին, դեպքերին, պատահարներին՝ դեպքի վայրում իրականացնելով ստեղծված իրավիճակի բացահայտմանն ուղղված միջոցառումներ.

- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից իրականացնել

տեղեկատվության հավաք, ամփոփելում, վերլուծել և ներկայացնել առաջարկություններ՝ որոշումների ընդունման համար, ինչպես նաև իր իրավասության շրջանակներում ընդունել համապատասխան որոշումներ.

- իրականացնել արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը և վերահսկել դրանց պարբերաբար թարմացումը.

- կազմակերպել մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծության աշխատանքները և սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն.

- իր իրավասության շրջանակներում կազմակերպել Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

- կազմակերպել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկայի հաշվառման աշխատանքները ու օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ներգրավումը փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.

- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման ուղղությամբ կազմակերպել և իրականացնել հետախուզություն, ինչպես նաև ամփոփել, վերլուծել հետախուզության արդյունքներով ստացված տեղեկատվությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

- իր իրավասության սահմաններում իրականացնել փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ներգրավված ուժերի օպերատիվ կառավարումը.

- բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպել և իրականացնել մարզի ղեկավար կազմի ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ մարզում տեղակայված համապատասխան միջազգային կազմակերպությունների իրազեկումը.

- սահմանված կարգով բնակչությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ.

- կազմակերպել արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծության և վիճակագրության վարման աշխատանքները.

- կազմակերպում է մարզի համայնքներում՝ բնակավայրերում տեղադրված ազդարարման վերջնական սարքավորումների (էլեկտրական շջակ, կառավարման վահանակ) հաշվառման և սարքինության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվության ամփոփումը և ներկայացումը, ինչպես նաև իրականացնում է վերլուծություն՝ ազդարարման վերջնական սարքավորումների տեղադրման վայրերի, տեղադրման վայրերի փոփոխության և անհրաժեշտ տեղադրման վայրերի վերաբերյալ:

- կազմակերպում է մարզի համայնքներում՝ բնակավայրերում տեղադրված ազդարարման վերջնական սարքավորումների (էլեկտրական շջակ, կառավարման վահանակ) հաշվառման և սարքինության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվության ամփոփումը և ներկայացումը Վարչության պետին:

- իրականացնել Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

- մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով կազմակերպել մարզի բնակչության ազդարարման իրականացման աշխատանքները.

- իրականացնել մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

- կազմակերպել տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծման ու դրանց արդիականացման աշխատանքները.

- սահմանված կարգով ձեռք բերել տեղեկատվություն՝ մարզի հերթապահ ծառայությունների թվաքանակի, գտնվելու վայրի և պատրաստության վիճակի վերաբերյալ.

- մոդելավորել տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների սպառնալիքի կամ ծագման դեպքում արդյունավետ արձագանքման և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման ուղղությամբ գործողությունները.

- կազմակերպել և ձեռք բերել (ըստ անհրաժեշտ ուղղությունների ու ոլորտների) մշտադիտարկման արդյունքները, իրականացնում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը.

- իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնել տարաժամկետ կանխատեսումներ.

- ապահովել դեպքի, պատահարի վայրից պահանջվող լրացուցիչ ուժերի ներգրավումը.

- իր իրավասության սահմաններում պահպանել և օգտագործել ճգնաժամային կառավարման կենտրոնին հանձնված պետական գույքը.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

#### **3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ**

##### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

##### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

### **4. Կազմակերպական շրջանակը**

#### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

#### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում

#### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

### **5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխգնդապետի կոչում:



Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՊԻՏԱԿԻ ՀՐՇԵՋ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ԱՎԱԳ ՀՐՇԵՋ- ՓՐԿԱՐԱՐ

#### 1. Ընդհանուր դրույթներ

##### 1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Սպիտակի հրշեջ փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Ջոկատ) ավագ հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.14-Կ-96)։

##### 1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա և հաշվետու է օղակի հրամանատարին։

##### 1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Ավագ հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի։

##### 1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ հրշեջ-փրկարարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի հրշեջ-փրկարարը։

##### 1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Մուրացանի 2։

#### 2. Պաշտոնի բնութագիրը

##### 2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

##### Գործառույթները՝

1. Ավագ հրշեջ-փրկարարը կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև ջոկատի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

2. Ավագ հրշեջ-փրկարարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է՝

ա. իր պարտականությունների և իր առջև դրված խնդիրների կատարման համար,

բ. կցված տեխնիկայի, սարքավորումների, հրշեջ-տեխնիկական հագեցվածության ու հանդերձանքի վիճակի համար

3. Ավագ հրշեջ-փրկարարի (հրշեջ ընդհանուր պրոֆիլի փրկարար) գործառույթները սահմանվում են Օրենքով, Փրկարարական ծառայության կանոնագրքով, Վարչության կանոնադրությամբ, սույն գործառույթային պարտականություններով և իրավական այլ ակտերով։

##### Իրավունքները՝

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։

5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։

6. իրավական պաշտպանությունը։

7. առողջության պահպանումը։

8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը։

9. նշանակման արդյունքները բողոքարկելը։

10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը։

11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը։

##### Պարտականությունները՝

• գիտենալ ջոկատի սպասարկման տարածքը, հրդեհավտանգ և կարևորագույն օբյեկտների, ջրաղբյուրների վայրերը, ինչպես նաև

ջոկատում գոյություն ունեցող հրշեջ ավտոմեքենաների և մյուս հրշեջ տեխնիկայի տակտիկատեխնիկական հնարավորությունները.

- բարեխղճորեն ուսանել հրշեջ-փրկարարական գործը, մշտապես կատարելագործել մասնագիտական գիտելիքները, հրշեջ-տեխնիկական սարքավորումների հետ աշխատելու ունակությունները.

- գիտենալ և բարեխղճորեն կատարել կանոնագրքերի, հրահանգների ու անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները.

- լինել կարգապահ.

- պահպանել պետական ունեցվածքն ու հակահրդեհային կենսակարգը, մաքուր և պատրաստ վիճակում պահել հրշեջ-տեխնիկական սարքավորումներն ու հանդերձանքը.

- պահակակետում հրդեհի (վթարի, տարերային աղետի) վայրում հստակորեն կատարել իր ծառայողական խնդիրները՝ ցուցաբերելով նախաձեռնություն.

- օգնել օղակի հրամանատարին՝ նոր ընդունված հրշեջների ուսուցանման գործում.

- իմանալ և կարողանալ կատարել հրշեջ ավտոմեքենայի ծառայողական մարտական հաշվարկի բոլոր համարների պարտականությունները.

- օղակի հրամանատարի բացակայության դեպքում կատարել նրա պարտականությունները.

- կատարել իր գործառույթային պարտականություններով սահմանված խնդիրները:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

